

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՐԵԱՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՐԿՈՒ ՃԱՌԵՐԸ

Յովհաննէս Քորեապիսկոպոսի անունով երկու ճառերու կամ զրութիւններու հանդիպած ենք մեր ձեռագիրներուն մէջ: Ա. ը Յովհաննէս Քորեապիսկոպոսի՝ ի սուրբ Կաթողիկէ եկեղեցի (տես Զեռ. թիւ 731, Հառընտիր Ի. Զ. թղ. 1ա-3ա: Հմմտ. Հ. Բ. Սարգիսեան, Մայր Յուցակ, Բ, էջ 389): Բ. ը Յովհաննէս Քորեապիսկոպոսի ասացեալ որ ի Վարազ երեւեցաւ սուրբ Նշանն (տես Զեռ. թիւ 731, Ճառընտիր Ի. Զ. թղ. 13բ-16ա: Հմմտ. Հ. Բ. Սարգիսեան, Մայր Յուցակ, Բ, էջ 392):

Խաչի ճառը մասամբ հրատարակած է արդէն Ալիշան՝ «Հայապատում»-ի մէջ, առնելով պատմական մասերը եւ դուրս թողնելով ներքողականը: Մինչ եկեղեցւոյ ճառը կը մնար տակաւին անտիպ: Ալիշան, խօսելով Ա. զրութեան հեղինակին վրայ, անոր ժամանակի մասին երկու տարբեր կարծիքներ կը յայտնէ: Նախ «Հայապատում»-ի Ա. մասին մէջ յիշելով Յովհաննէս Քորեապիսկոպոսը, կը գրէ. «Եթեքերորդ զարու երկրորդ կիսում երեւի Արծրունեաց երկրի Վանայ կողմերը մեծ աւանի կամ վանքի մը առաջնորդ. յոմանց պարզապէս քահանայ կոչուած, այլ ի վերնագրի գրուածքին քորեապիսկոպոս»¹: Երկրորդ անգամ ալ հեղինակին զրութիւնը մէջ բերած ատեն, ծանօթութեան մէջ կը գրէ. «Յետագայ յօդուածն յայտնէ որ Ը. զարու երկրորդ կիսում էր հեղինակս այս»²: Ինծի կը թուի թէ տրւած պարզական վրիպակի մը արդիւնքն ըլլայ կարծիքներու այս երկուութիւնը:

Հ. Բարսեղ Սարգիսեան խօսելով եկեղեցւոյ ճառին մասին, կը յիշէ Ալիշանի

այս երկու կարծիքները եւ կը համարի թէ «Ալիշանի արտայայտած առաջին կարծիքն ըլլայ հաւանական»³, այսինքն՝ իրեն համար Յովհաննէս Քորեապիսկոպոսի. զարու ասորած պէտք է ըլլայ: Հ. Բ. Սարգիսեան թէեւ կ'ընդունի որ Յովհաննէս՝ երկու ճառերուն ալ հեղինակն է, բայց համեմատելով երկուքը՝ իրարու, կ'ըսէ. «Մեծապէս կը տարբերին այս ճառիս (եկեղեցւոյ ճառը) շարադրութիւնը ու բառակազմութեան նկարագիրը, որ աւելի հին կ'երեւայ ինձ և ինքնայատուկ»⁴: Սակայն ան չի հետեւցներ թէ երկու ճառերուն տարբեր հեղինակներ պէտք է վերադրել: Մանաւանդ թէ, Յովհաննէսի հայազգի ըլլալուն իրրեւ փաստ կը դործածէ Բ. ճառը, որ Վարազայ Խաչին պատմութիւնն է: Ան միայն կ'ուզէ եկեղեցւոյ ճառին հեղինակին ժամանակը կանխել, որովհետեւ Յովհաննէս կը յիշէ իր վարժապետին անունը, Մովսէս անունով մէկը, զոր Հ. Բ. Սարգիսեան կը թելադրէ նոյնացնել կամ Մովսէս Տարօնացի քերթողաձօր, կամ Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսին հետ: Ուստի, իր երկրակացութիւնը կ'ըլլայ Յովհաննէս Քորեապիսկոպոսին ժամանակը տանիլ Զ. կամ Է. զարու սկիզբները:

Նախ քան Յովհաննէսի ասորած ժամա-

1. Ա. Ի. ՇԱՆ, Հայապատում, (փոքրագիր), Վենետիկ, 1901, էջ 172:
2. Ա. Ի. ՇԱՆ, Աճ, էջ 521, Ծն. 1, (Յօդ. ճշգր.):
3. Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Մայր ցուցակ Զեռագրաց, Վենետիկ, 1914, Բ, էջ 389:
4. Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Աճ, էջ 390:

նակն ստուգելը, ըսենք որ՝ երկու ճառերուն հեղինակի նոյնութեան մասին՝ մենք տարակոյս չունինք, քանի որ երկու ճառերն ալ միեւնոյն անունը և խորագիրը կը կրեն. զրական ոճի կամ լեզուի տարբերութիւնը, զոր կը նշմարէ Սարգիսեան այդ երկու ճառերուն մէջ, առաջ կու գայ երկուքին մշակած գրական տարբեր սեռերէն. եկեղեցւոյ ճառը ներքողական զրութիւն մըն է, մինչ Խաչի ճառը առաւելապէս պատմական է, նպատակ ունենալով ներքողել: Եւ արդէն ներքողական մասերուն մէջ տարբերութիւնները կը նշուազին:

Յովհաննէս Քորեապիսկոպոսի ժամանակը

Յովհաննէսի մասին զրական վկայութիւն մը ունինք Տաճատ Վարազացիի զրութեան մէջ, ուր Տաճատ կը յիշէ թէ Վարազայ Խաչին յայտնութեան պատմութիւնը գրած է «Յովհաննէս քահանայ սակաւ ինչ ի բազմաց»⁵: Մեր ձեռագրին մէջ Տաճատի զրութեան կը յաջորդէ «Յովհաննէս Քորեապիսկոպոսի ասացեալ վասն որ ի Վարազ երեւեցաւ սուրբ Նշանս» զրութիւնը: Իրապէս այս զրութեան մէջ կը յիշուի Վարազի մէջ, Տէր Թողիկի օրով տեղի ունեցած խաչի երեւման պատմութիւնը: Ուստի, պարզ է որ Տաճատի յիշած Յովհաննէս քահանան՝ նոյն է Յովհաննէս Քորեապիսկոպոսին հետ: Տաճատի վկայութիւնը մեզի կը ծառայէ նաեւ իրրեւ կուտան մը՝ որոշելու Յովհաննէսի ժամանակը: Տաճատ, Վարազի առաջնորդը, Է. զարու կէսերը ասորած է: Վարազի վանքի առաջնորդներու մասին խօսած ատեն, ան կը գրէ՝ թէ յաջորդած է Երեմիայի, որ քառասուն տարի վարած էր իր պաշտօնը: Երեմիա՝ յաջորդած է Յովէլի, որ նոյնպէս քառասուն տարի վարած էր իր պաշտօնը, Թողիկէ ետք: Այս վերջինիս օրով է որ տեղի ունեցած է Վարազայ Խաչին երեւումը, այն է 660ին: Ուստի Տաճատի ժամանակը կ'իյնայ չորսը դար մը ետք: «Յետ սրբոցս այսոցիկ (Թողիկ, Յովէլ եւ Երեմիա) կա-

ցի ի կարգի սրբոցս եւ յոգնամեղ Տաճատ»⁶: Ասկէ՝ դիւրին է հետեւցնել թէ Յովհաննէս Քորեապիսկոպոս ասորած ըլլալու է ընդ մէջ Է. եւ Ը. զարերուն, այսինքն յետ Վարազայ Խաչին երեւումին (660), եւ նախ քան Տաճատ՝ Վարազի վանքի առաջնորդը (750): Արդ, հիմնուած այս կուտանին վրայ, Ը. զարու ըսկիզբները կը գտնենք Յովհաննէս Քորեապիսկոպոս մը, որ մասնակցած է Մանազկերտի ժողովքին (726ին): Անոր անունը պահուած է, քիչ մը ազաւաղ ձեւով, Միւքայէլ Ասորիի ժամանակագրութեան ասորական բնագրին մէջ⁷: Ասկէ կարելի է հզորակացնել թէ այս Յովհաննէս քորեապիսկոպոսը նոյն անձն ըլլայ մեր երկու ճառերու հեղինակին հետ:

Յովհաննէս քորեապիսկոպոս եկեղեցւոյ ճառին մէջ կը յիշէ՝ թէ իր մանկութեան շրջանին աշակերտած է Մովսէսի մը. «Իսկ ի մանկութեան իմում տալով եւ ինձ յովհաննէս Մովսիսէ, որ Նարաթս եւ Արիութս եմ»⁸: Ո՞վ է այս Մովսէսը: Սարգիսեան կը թելադրէ նոյնացնել զայն Մովսէս Տարօնացի քերթողաձօր կամ Մովսէս Եղիվարդեցիի հետ⁹: Բայց ունինք նաեւ Մովսէս Սիւնեցի քերթողաձօր մը, որ Ստեփանոս սիւնեցիի վարժապետը եղած է եւ ասորած՝ Է. զարուն¹⁰: Մովսէս քերթողաձօր մըն ալ կը յիշուի մեր մատենագրարանի թիւ 822 Զեռ. ին մէջ, իրը հեղինակ ժամանակացոյցի¹⁰,

5. Ա. Ի. ՇԱՆ, Հայապատում, էջ 526 (Յօդ. ճշգր.):
6. Ա. Ի. ՇԱՆ, Աճ, էջ 527: Հմմտ. Ա. ՃԱՌԵԱՆ, Անճանճութեան Բառարան, Տաճատ, Առաջնորդ Վարազայ վանքի, հտ. Ե, էջ 137:
7. Հմմտ. ԵՐ. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիներին հետ, Էջմիածին, 1908, էջ 194. կամ ՄԱՐԿՈՒԱՐՏ, Պարսկահայ Բառարան, «Պատմաբանասիրական հանդէս», 1961, թիւ 2, էջ 237:
8. Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Մայր ցուցակ, Բ, էջ 390-391:
9. Հ. Գ. ԶԱՐԲԱՆԱԼԵԱՆ, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 472:
10. Հմմտ. Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Յուցակ, Բ, էջ 157:

որ համառոտ ժամանակադրական ցուցակ մըն է, ուր Ադամէն սկսեալ կը յիշուին գլխաւոր դէպքերու թուականները, մինչեւ Հերակլ կայսեր ԺԸ. տարին, որ է Ս. Խաչի ազատման եւ վերադարձի տարին (628): Ուրեմն, այս Մովսէսն ալ՝ է. դարու հեղինակ է, եւ դուցէ կարելի ըլլայ զինք նոյնացնել Սիւնեաց եպիսկոպոսին հետ:

Կարելի է, ուրեմն, եղբայրացնել թէ երկու ճառերուն հեղինակ Յովհաննէս Քոբեպիսկոպոս՝ է-Ը. դարերուն մէջ ապրող անձ մը եղած է, մասնակցած է Մանազ-կերտի ժողովքին, եւ Ալիշանի ըսածին համաձայն՝ «Արծրունեաց երկրին, Վանայ կողմերը մեծ աւանի մը կամ վանքի մը առաջնորդը եղած»¹¹:

Եկեղեցւոյ ցառը

Յովհաննէս իր այս ճառը խօսած է եկեղեցւոյ մը նաւակաւորի առիթով «աստեղախուռն կաճառի» մը առջեւ, այսինքն «ի մէջ սրբոց աստուածարուեստս եւ հոգիերգս եւ մարգարէարհեստ եւ երկնաքերական ուղղափառս»: Այս մակդիրները կը յայտնեն թէ ներկաները թէ՛ եկեղեցական եւ թէ՛ դիտնական երեւելի անձնաւորութիւններ էին: Ժամանակին այդպիսի անձերու բաւական բազմութիւն մը կար. կը բաւէ նշել Մանազկերտի ժողովքին մասնակցողներէն քանի մը հատը. Յովհանն Օձնեցի, Գրիգոր Արշարունին, Խոսրովիկ, Սողոմոն Մաքենոցաց վանահայրը, եւն: Ներկաներուն մէջ՝ մասնաւորապէս նկատելի է եկեղեցին շինել տուող իշխան մըն ալ, որուն կ'ակնարկէ ան՝ ճառին վերջաւորութեան. «Արդ եկայք յառաջ մատուցուք զչինոյ սորա, քանզի ձեռք սորա հիմունս արկին տանս այսմիկ եւ ձեռք որ կատարեսցեն յետուայէս եւ ահարոնանման պարկեշտաբայլ քահանայութեամբ»: Ո՞վ էր այդ իշխանը եւ ի՞նչ եկեղեցիի մասին է խօսքը՝ զժուար է ստոյգ բան ըսել. կարելի է զանազան ենթադրութիւններ միայն ընել: Յիշատակարանի մը համաձայն¹², 706ին Գա-

զիկ Կամսարական Վարդանակերտի մէջ եկեղեցւոյ մը նաւակաւորքը կը տօնախմբէ. նոյն ատեն լուրը կը հասնի իր քրոջ՝ Շուշանիկի նահատակութեան: Շուշան եւ Գազիկ որդիներն են Վահան Պատրիկին, որուն հրամանով՝ Գրիգորիս իր Ընթերցուածոց Մեկնութիւնը գրած է: Արդեօք ճառին վերի բացատրութիւնը թէ «Ձեռք որ կատարեսցեն յետուայէս եւ ահարոնանման պարկեշտութեամբ» չի՞ ակնարկեր Վահան Պատրիկի իշխանական վիճակէն դէպի եկեղեցական վիճակի անցքը:

Ուրիշ ենթադրութիւն մըն ալ կարելի է ընել. նկատի առած որ Յովհաննէս գրած է Վարազայ Խաչին ուղղուած ներբողեան մը՝ հիւսելով անոր պատմութիւնը, Եկեղեցւոյ ճառն ալ նոյն Վարազայ եկեղեցիներէն մէկուն շինութեան կամ նաւակաւորի առթիւ խօսած ըլլայ: Ասոր կրնայ նպաստել համեմատութիւն մը Վարազայ Ս. Աստուածածին եկեղեցւոյն նկարագրութեան, զոր մեզի կու տայ Հ. Համազասպ Ոսկեան իր Վասպուրական - վանի վանքերը գործին մէջ, եւ Եկեղեցւոյ ճառին հետեւեալ բացատրութեան միջեւ. «Եղէկիշխարար մարգարէութեամբ չափեցեր զպատշգամսդ ձողաչափով, ըստ չորհատուր սուրբ Հոգւոյն, ի դրանէ ի դուռն հոգեբնակ տաճարիս Աստուծոյ եւ լցեր ի սմա լապտերս իւղով անուշիկ»: Ոսկեան ալ Վարազի եկեղեցիներու նկարագրութիւնը այսպէս կ'ընէ. «Շինուած տափաստանի վրայ, կը բաղկանայ կից եօթ եկեղեցիներէ... Եկեղեցիները նըւիրուած են Ս. Աստուածածնի, Ս. Գէորգի, Ս. Նշանի եւն»: Մեզ կը հետաքրքրէ Աստուածածնի եկեղեցիին նկարագրու-

11. ԱԼԻՇԱՆ, Հայապատում, էջ 172: Ալիշանի այս ենթադրութիւնը կը հաստատուի Վարազայ Խաչին ճառով, ուր Յովհաննէս այնքան ջերմ արտայայտութիւններ ունի թէոգորոս Թեոփիլի եւ մանաւանդ անոր որդւոյն՝ Վարդի նկատմամբ, որոնք Վասպուրականի իշխաններ եղած են:

12. Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Յիշատակարանք Զեռագրաց, էջ 52:

թիւնը, որուն համար կը գրէ հեղինակը. «Շատ սիրուն է եւ նման Աղթամարի սուրբ Խաչին: Կառուցուած է անտաշ ու մեծ քարերով...: Ունի այս առանձնաշատկութիւն որ չորս պատերը ոչ թէ անմիջապէս կը միանան, այլ անկիւններու մէջ մի մի մետրաչափ տրամագծով խորշեր կը կազմեն, որոնց մէջէն մէկական դռներ կը բացուին դէպի խորաններ...: Շինութեան թուականը ծանօթ չէ. կայ երկաթադիր արձանագրութիւն մը՝ անկիւնի խաչքարի վրայ ԶԾ թուականէն, բայց յետագայ ժամանակի մէջ դրուած է»¹³: Այս նկարագրութեան մէջ աչքի կը զարնէ տաճարին առանձնաշատկութիւնը կազմող չորս անկիւններու մէջ՝ մի մի մեղրաչափ տրամագծով խորշերը, որոնց մէջէն մէկական դռներ կը բացուին, որոնք կարծես եկեղեցւոյ ճառին մէջ յիշուած պատշգամներն ըլլան. «չափեցեր զպատշգամսդ ձողաչափով դրանէ ի դուռն»: Բնականաբար ասոնք լոկ ենթադրութիւններ են եւ աւելի արժէք չեն ներկայացներ: Ամէն պարագայի, Յովհաննէսի ճառը Ը. դարու սկիզբները կառուցուած եկեղեցւոյ մը նաւակաւորին առիթով խօսուած է:

Ճառը ունի քանի մը հետաքրքրական նորութիւններ: Հոն յիշուած է Յայտնութեան գիրքը, որմէ ակնարկ մը կայ. «Սա է քաղաք Աստուծոյ կենդանւոյ. սա է քաղաք զոր ետես Յովհաննէս, զերուսաղէմ՝ վերին կրկին զարեգակն զղեցեալ»: (Հմմտ. Յայտնութիւն Յովհաննու, ԻԱ, 10-27): Յայտնութեան գրքին նախնեաց թարգմանութիւնը աղաւաղ ըլլալով, Ն. Լամբրոնացիին նոր թարգմանութեան կամ հինը սրբագրելու ձեռնարկեց: Հնագոյն թարգմանութեան միակ վկայութիւն մը ունէինք Ժ. Ղարէն՝ Գրիգոր Նարեկացիի մօտ: Այժմ Յովհաննէս Քոբեպիսկոպոսի ճառին մէջ հնագոյն մըն ալ ունեցանք, որով նախկին թարգմանութեան գոյութիւնը մինչեւ է. դար կը բարձրանայ¹⁴: Դաւանաբանական գետնի վրայ արժէքաւոր է նաեւ Տիրամօր վերափոխման մասին ըրած ակնարկը. «Ո՞վ երջանիկ

Մայր, ... որ փոխեցար յաստեացս եւ նովքարար»: Աս ալ կարելի է նկատել վերափոխման մասին հնագոյն վկայութիւնը, եթէ նկատի չառնուին ժամագրքի մէջ եղած ակնարկները:

Խաչի ցառը

Այս ճառին մէջ Յովհաննէս աւելի պատմական ոճը կիրարկած է՝ քան ներբողականը. անոր համար աւելի պարզ ու սահուն լեզուով կը նկարագրէ Վարազայ Խաչին յայտնութիւնը, տալով պատմական հետաքրքրական տեղեկութիւններ: Չունի Եկեղեցւոյ ճառին ճոռոմարանութիւնը, եւ ոչ ալ բարդ բառերու կուտակումը: Բայց անոր նման՝ աս ալ Ս. Խաչի տօնի մը առթիւ խօսուած ըլլալու երեւոյթը ունի, քանի որ յառաջաբանը եւ վերջաւորութիւնը Ս. Խաչին ուղղուած ներբողեան մըն է:

Դաւանական գետնի վրայ, Հայ. Եկեղեցւոյ՝ նոյն ժամանակի տեսակէտը կ'արտայայտէ Քրիստոսի համար ըսելով. «Խաչնեալ եւ միաւորեալ զմարդկութեան բնութիւնն ընդ աստուածութեան, եղեալ յերկուց բնութեանց մի» (Հմմտ. Յովհան Օձնեցիի նման բացատրութիւնը¹⁵): Ասով Յովհաննէս, թէեւ կ'արտայայտէ ուղղափառ վարդապետութիւնը Քրիստոսի բնութեանց մասին, բայց չի որդեգրեր Քաղկեդոնի բանաձեւումը, որ «Յերկուս բնութիւնս մի անձն» որոշած էր: Կը շեշտէ նաեւ թէ «Ոչ յերկուս բաժանիւր», ոչ միայն նեստորականութեան դէմ, այլ հաւանաբար քաղկեդոնականներու ալ, որոնց բանաձեւումը, այդ եղբայրականութեան կրնար յանդիլ: Նմանապէս

13. Հ. Հ. ՈՍԿԵԱՆ, Վասպուրական-վանի վանքերը, Վիեննա, 1940, Ա, էջ 268-339:

14. Հմմտ. Ֆ. ՄՈՒՐԱՏ, Յայտնութիւն Յովհաննու ինքնայն բարգմանութիւնը, Երուսաղէմ, 1905-11, Ներածութիւն:

15. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՕԶՆԵՑԻՈՅ Մատենագրութիւնք, Վիեննա, 1953, էջ 63: «Ընդ նմին եւ դուք երկուցեալք յերկուց ասել բնութեանց ի Պանդարոսին անկանիք յիմարութիւն»:

վաշեղելոյ ի նմա : Եւ ապա յետոյ քան զամենայն՝ վասն կատարելոյ ի սկզբանն խորհրդոյ՝ արարեալ զմարդն ըստ պատկերի արարչութեան իւրոյ եւ եղեալ զնա ի մէջ երկրաբուր վաշեղական սերմանեացն բուսոց եւ տնկոց : Ապա թո-
ղեալ ի կամս վասն փորձանաց մարդոյն զխորասոյզ եւ զապստամբ վիշապն ,
զանկեալն ի լուսափայլ փառացն , որով անկեալ մարդոյն ընդ սահմանս դառ-
նաչունչ չարաթոյն աւճին ժառանգեաց զմահ զառնալ անդրէն ի հող ուստի
առաւ :

Արդ բարեբարին Աստուծոյ զթացեալ յարարածս իւր եւ կամեցեալ ոչ
ի սպառ կորուսանել զստեղծութեան ձեռաց իւրոց վասն առնելոյ զմարդն ի
պատկեր իւր , ի վախճան առուրց աշտոյիկ եւ ի վեցհազարեան զարուս առա-
քեաց Աստուած զՈրդին իւր , զԲանն Աստուած , զբարեբարն եւ զանքննելին ,
զանխմանալին եւ զանհասանելին . որոյ կատարեալ զկամս հայրական եւ ըզ-
միակամութիւն , զխորհուրդ երբորդութեանն , եկեալ ի սուրբ Կոյսն Մարիամ ,
եւ ի նմանէ մարմին զդեցեալ եւ բնակեալ յանարատ , յանապական յարգան-
դին , իննամսեայ ժամանակաւ . եւ իննամսեալ եւ միաւորեալ զմարդկութեան
բնութիւնն ընդ աստուածութեան , եղեալ յերկուց բնութեանց մի , ծնանիւր
ի սրբոյ Կուսէն Աստուած Բանն հանդերձ մարմնովն , զոր ա՛ռ ի սրբոյ Կու-
սէն . եւ ոչ յերկուս բաժանիւր , այլ եղեալ ճշմարիտ մարդ կատարեալ եւ ոչ
կարծիս ունելով : Եւ սնեալ մարդկաւորէն ուտելով եւ ըմպելեալ , աճեալ եւ
զարգացեալ մինչեւ ի չափ հասակի կատարման իւրոյ , կատարելով զկանխա-
սաց մարգարէութիւնն եւ անցեալ ընդ մարդկային կենցաղոյս առանց մեղաց ,
երեսնամեայ ժամանակաւ մկրտեալ ի Յորդանան ի Յովհաննէ . եւ սկսեալ
աստուածաբար առնել նշանադրութիւնս , եկն կամաւորաբար ի չարչարանս
եւ զատապարտեալ ի հրէից , առեալ կամաւ յանձն զչարչարանս , զհոգայն ,
զաղաւթին , զտրտման , զանարդին , զապտակիւն , զթքանիւն , զփշաւք պսա-
կիւն եւ զկատարելն ի յախորտանացն² , եկն եւ կամաւ ի խաչ , բեւեռեալ ի
խաչին մեռաւ , եղաւ ի զերեզմանի եւ ոչ ետես զապականութիւն երեքաւրեայ
թաղմամբն , այլ յարեալ աստուածաբար նովին մարմնովն եւ ոչ առ աչաւք ,
վերացաւ յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Հաւր նովին մարմնով եւ զալոց է միւս-
անդամ զատել զկենդանիս եւ զմեռելոյս նովին թաղաւորութեամբ : Եւ ի վե-
րանալ առ Հայր իւր յերկինս եթող զսուրբ խաչ իւր փրկութիւն աշխարհի :

Այս խաչ էր որ(ոյ) երբեմն սերովբէքն հրեայն նիղալաւքն պահէին
զճանապարհն : Այս խաչ էր որ յաւրինեալ խառնութեամբ քառակուսի լինելով
պարխապ ամուր եւ աշտարակ հզաւր ընդդէմ խոռոչացեալ ահագին ձայնիցն
բացելոց սահանաց երկնից եւ երկրի , եւ ապրեցողցանել ի ծառայական կոր-
ծանմանէն զարգացեալ ութ ոգիսն եւ արար նորոգութիւն աշխարհի վերստին :
Այս խաչ էր որ բաժանեաց զժուրն յայսկոյս յայնկոյս եւ անց Իսրայէլ ընդ մէջ
նորա իրբեւ ընդ ցամաք : Այս խաչ էր յորոյ վերայ բարձրացեալ էր աւճն յա-
նապատին , եւ ի խաճանել իսրայելացւոցն ի թունաւորացն՝ հալէին ի նա եւ
առժամայն բժշկէին : Այս խաչ էր որ լինէր սիւն հրոյ ի զիշերի եւ լուսաւորէր
դրանակն ամենայն : Այս խաչ էր որ ծաղկեցաւ ի ձեռինն Ահարոնի : Այս խաչ
էր որ առաջնորդէր ժողովրդեանն յերկիրն պարզեալ՝ անցանել ընդ Յոր-
դանան ի ձեռն մեծ զաւրավարին Յեսուայ եւ վիճակեալ զցեղսն բանակեցան

ի խաղաղութիւն : Այս խաչ էր որ ասէր զլուսն մարգարէիցն թէ «Անիծեալ ա-
մենայն մարդ որ կախեալ կայցէ զփայտէ»³ : (14ր) Այս խաչ էր որ մարգարէն
ասէր . «Եկայք արկցուք փայտ ի հաց նորա եւ ջնջեցուք զանաւրէնութիւնս
մեր»⁴ : Գուշակէին առաջինքն առաջին նախադուշ(ակ) աւրինակաւ զճշմար-
տութիւնս որ բեւեռեալ ի սմա աստուածորդին մարմնով իւրով՝ որ է հաց կե-
նաց , եւ բարձեալ զմեղս եւ զանէծս առաջին մարդոյն եղեւ փրկութիւն աշ-
խարհի եւ լուսաւորեաց զամենայն տիեզերս :

Արդ ի ժամանակս վերջինս երեւեալ սքանչելեացն Աստուծոյ յաշխար-
հիս Հայոց ի տանս Թորգոմայ յերկրին Վասպուրականի ի լերինն Վարազ ,
այր ոմն որոյ անուն Թորգիկ ճանաչիւր . նմանեալ նախապետին Ենովքայ , յետ
ամուսնանալոյ եւ որդիս ծնանելոյ , հրաժարեալ յերկրային կենցաղոյս առ ի
կատարել զքրիստոսական հրամանն , եթէ «Որ ոք ոչ թողցէ զհայր կամ զմայր
կամ զկին կամ զորդիս կամ զտունս կամ զազաւրակս եւ առցէ զխաչ իւր եւ
եկեսցէ զհետ իմ ոչ է ինձ արժանի»⁵ : Սա երթեալ բնակէր ի կատարս լերինն
Վարազայ . եւ եղեւ միայնացեալ որպէս ճնճղուկ միայն ի տանիս , լեռնական ,
ընդակեր , անապատացեալ , յիշելով զասացեալսն ի Տեառնէ , թէ «Որ սիրէ
զիս , ես եւ Հայր իմ՝ եկեսցուք եւ աւթեմք անս տու միմա արասցուք»⁶ : Եւ ի ձեռն
սորա այս լեռն Վարազ աստուածընկալ փառաւ հաւասար եղեւ այնմ սի-
նէական լերինն , ուր փողն հնչէր եւ բարբառ պատգամացն ահագին տես-
լեամբ . այլ եւս առաւել զերազանցեալ որպէս լեռն Սիրովն եւ քաղաքն Ե-
րուսաղէմ : Յայնմ ի Սինա բոց հրոյ եւ մէջ եւ մառախուղ , իսկ ի սմա լոյս եւ
մաքրութիւն եւ սրբութիւն . ի նմա ձայն փողոյ ահագին , ի սմա բարբառ
հրեշտակաց սքանչելի . անդ զազան մերձենալով ի նա քարկոծ լինէր , իսկ
աստ հոյլք երէց կայտուելով ճարակին իրր ի խաղս . անդ ժողովուրդն եր-
կիւղիւ զաղաղակ բարձեալ ասէին . «Սաւեսցի ընդ մեզ Մովսէս եւ մի՛ խաւ-
սեսցի ընդ մեզ Աստուած»⁷ , իսկ աստ տիեզերք ամենայն խնդութեամբ ընթա-
ցեալ յանդիման լինել երեսացն Աստուծոյ . ի նմա զլուսն մարգարէիցն Մով-
սէս զահի հարեալ էր եւ դողայր , իսկ աստ այս աստուածասէր Թորգիկ փա-
ռաւորեալ եւ հրճուեալ . ի նմա երեսաւք միայն փառաւորեալ լինէր , ի սմա
բոլորովին իսկ տեսութեամբ :

Եւ ահա այս լեռն Վարազ ճշմարտաբար երկրորդ Սիրոն եւ վերին Ե-
րուսաղէմ , որ է վերադոյն քան զՍինա : Եւ այսպիսի փառաւք փառաւորեալ
առնն Աստուծոյ բաղում ժամանակս անցուցեալ , հրեշտակական տքնութեամբ
զասակցեալ լինէր ընդ հրեշտակս յանդադար փառաբանութեան , եւ եղեալ
զաստուծոյ եւ բնակարան սուրբ Հոգւոյն՝ լինէր արժանի աղգման ինչ
հաճոյ Աստուծոյ եւ բնակարան սուրբ Հոգւոյն՝ լինէր արժանի աղգման ինչ
խորհրդոյ ի վերուստ : Եւ առեալ զգիտութիւն յառաջագոյն վասն զալստեան
սուրբ Հոգւոյն տասնաւրեայ աւուրբք եւ ահագին զարմացմամբ ըմբռնէր
չհամարելով զինքն արժանի վերին խորհրդոյն՝ կարծելով փորձանս ինչ հա-
սեալ : Եւ այսպէս ջնջմեռանդն արտասուաւք աղաւթէր առ Աստուած չզրկիլ
ի խոստացելոց պարգեւացն , ոչ տայր քուն աչաց եւ նինջ արտեւանաց մինչեւ
տեսանել զսքանչելիսն Աստուծոյ :

Եւ ի ընդ տասնաւրեայ պահոցն լինէր բարբառ ինչ ահագին սաստիկ
յոյժ , եւ թնդեալ երկիրն ամենայն եւ նորա եղեալ ի զարմացման սրբասնուն

2. Օր . ունէր զկատարիլն ի յախորտալն Տ նշանով , որ սխալ ընթերցում կը նշէ .
մենք ուղղելինք ըստ իմաստին :

3. Գաղ . Գ , 13 (հմտ . Բ . Օրէնք , ԻԱ ,
23) :

4. Երե . ԺԱ , 19 :

5. Հմտ . Մատ . Ժ , 37-38 :

6. Յովհ . ԺԳ , 23 :

7. Հմտ . ԵԼք , Ի , 19 :

կան ողջունել եւ զնացին խաղաղութեամբ եւ մեծաւ ցնծութեամբ յիւրաքանչիւր բնակութիւն:

Այս սքանչելիք եղեն յաւուրս բարեպաշտ թագաւորին Կոստանդիանոսի¹⁷ կացելոյ Հռովմայեցոց աշխարհին, եւ ի հայրապետութեան Ներսիսի¹⁸ Հայոց աշխարհին, եւ ի կողմնակալութեան Վարդայ Վասպուրականի Ռըշտունոյ, որդւոյ քաջի եւ առաքինւոյ աստուածասիրին Թէոփոբեայ Ռշտունաց տեառն, եւ զաւարտարի Հայոց Մեծաց աշխարհին, որ արիարար քաջութեամբ վասն սրբոյ եկեղեցեաց շինութեանց՝ զամենայն աւուրս կենաց իւրոց ի մարտ պատերազմաց անցուցեալ եւ վանեալ սրով սուսերի իւրոյ զաղղն իսմայէլեան, յաղթող լինէր հանապաղ վերին աւգնականութեամբն: Այս Վարդ եղեալ քրիստոսասէր ի տղայական տիւր մինչեւ ցկատարեալ ժամանակս վարէր երկիւղիւն Աստուծոյ. այր խորհրդական եւ հանձարեղ, ի մաստութեամբն եւ շնորհաւոր Աստուծոյ, (16ա) կեցեալ սրբութեամբ, պարկեշտութեամբ, խոնարհութեամբ, եկեղեցասիրութեամբ, պատուիրանասիրութեամբ, պաշտաւնասիրութեամբ, զտիւ եւ զվիշեր ոչ պակասեցուցանէր ի տան իւրում զերգս աստուածային սաղմոսաց, կատարելով անխափան զեւթն անգամ սաղմոսն աւրհնութեանցն Դաւթի՝ քահանայիւք եւ դաս դաս պաշտաւնէիւք զեղեղելով առաքէր զհրեշտակական երգս ի բարձունս: Առ սա առաքեալ լինէր ի մեծ եւ ի հռչակաւոր առնէն Թողկայ վասն զալստեան սրբոյ խաչին, եւ որպէս էր պատմեալ զամենայն դործսն ճշմարտութեամբ սքանչելեացն Աստուծոյ՝ զհրեշտակացն եւ զգալուստ սրբոյ խաչին: Եւ մեծաւ խնդութեամբ յոտն կացեալ բազմութեամբ աղատովքն առ նա ժողովելոց, փութանակի հասանէր ի դուրս երանելոցն Թողկայ. եւ եղեալ արժանի սրբոյ խաչին ողջունի՝ առնայր հրաման զի տաւնախմբեսցէ զաւրս դայն զենամար. եւ հրաման տուեալ յիւր վաստակոց արդարութեան ամէլ հաւտս ոչխարաց եւ ջուկս զուարակաց բազումս եւ բազմեցուցեալ զասս դասս զբազմութիւն մարդկանն՝ լցուցանէր զամենեւեան: Որով ընկալեալ զհաճոյութեան աւրհնութիւնսն ի բարերարէն Աստուծոյ բնակէր ի խաղաղութեան եւ տայր փառս ի բարձունս ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ յաւիտեանս:

17. Կոստանդ Բ. 641-668:

18. Ներսէս Գ. Ծինող 641-661: Այս տրւեալներէն կը հետեւի թէ Վարդի Ս. խաչին երեսուժը տեղի ունեցած է ընդ մէջ 641-ի եւ 661-ի: Իսկ Վարդ իշխանի կուսակալութեան յիշատակումով զեռաւելի կրնանք սեղմել ժամանակը. վասնորի Թէոփոբ Ռշտունին 655ին մեռած ըլլալով, անոր որդին Վարդ, այդ թրւականէն ետք ստացած է կուսակալութիւնը: Ծանօթութիւն մը համաձայն ալ ձեռնարկէ հայոց թուականին տեղի պէտք է ունեցած ըլլայ խաչին յայտնութիւնը,

այսինքն 653ին: Սակայն վերի ըսածնուս հետ ան չի համաձայնիր: Ուստի կ'ընդունինք Օրմանեանի թելադրած սրբազրութիւնը այդ թուականը կարգաւ ձեռն. որ է ըսել 660 տարին: Մասնաւոր ուր Օրմանեան (Աղղապատում, Ա. էջ 737) ուրիշ անտեղութիւն մըն ալ կը նշէ 653ին համար, այսինքն Ներսէս կաթ.ի փախուստը Հայաստանէն՝ այդ տարին. մինչդեռ 660ին համար լաւ կը յարմարին վերեւ յիշուած բոլոր պարագաները:

ՔՆՆԱԿԱՆ ՓՈՐՁ ՄԸ

ՆԵՐԿԱՅ ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄԻՆ ՇՈՒՐՁ

ՔԻՐԻՍՏԻԱՆՍ - ՆԻՑՇԵ - ՍԱՐԹՐԸ - ՄԱՐՍԵԼ

(Շար. տե'ս «Բազմալեզու» 1965, ք. 8-10, էջ 233)

Ն Ի Ց Շ Ե

(Friedrich Nietzsche, 1844-1900)

Պորտակուած, ստորնացած զգաց ինքզինքը Նիցշէ Գրեքեկարտի յայտարարութեան զիմաց ու իր ստեղծած աստուծոյ¹¹ զիսկին առջեւ ըսաւ. «Իմ կամքս ըլլայ»:

Նիցշէ ալ մեղի կը ներկայանայ իր փոթորկոտ ինքնակենսադրութեան էջերով: 1862-1872ի տեւեմբերը տեղի ունեցաւ կարեւոր եւ նշանակալից հանդիպում մը Նիցշէի եւ Վալկների: Վալկների երաժշտութիւնը, կը դրէ Պրինի, Նիցշէի երեցաւ իրրեւ վերադարձ մը զէպի Հոլը, զէպի ապրելու տենչացող անսպառելի կամքի մը անդունդները¹²: Հինէն խտացած ոյժի մը պոռթկալը կ'աւետէ մեղի Նիցշէ, վերադարձ մը կը քարոզէ, կը պահանջէ հաւատարմութիւն նիւթին եւ հողին... բնութեան: Նիցշէ կը պատմէ մեղի Աստուծոյ մը մահուան մասին: Գիտակից է Նիցշէ իր քարոզածին կարեւորութեանը մասին: Նիցշէ, կ'ըսէ չեքմանացի ուսումնասէր մը, զիտէ թէ եւրոպական մշակոյթին ամբողջ հիմք՝ հաւատքն է Աստուծոյ հանդէպ. եթէ խորտակուի այդ հաւատքը, ամբողջ աշխարհ մը կը կործանի իրեն հետ: Եւ այն ատեն ինքը Նիցշէ, պիտի դառնայ մարդարէն արեւու մթաղնութիւն ու խաւարումին, որուն հաւասարը եղած չէր երբեք երկրի վրայ¹³:

Այս Աստուծոյ զէմ եղած ըմբոստ շար-

ժումը, (ճանչնալով հանդերձ անոր եղանականութիւնն ու ինքնատուութեան նորութիւնը) իր ընդհանուր արտայայտութեան մէջ կը մնայ սակայն միշտ կրկնութիւնը անցեալին:

Քիչ տարիներ առաջ, այսինքն 1840ին, Ֆոյերպախ (Feuerbach) հռչակած էր «փոփոխութեան մը անհրաժեշտութիւնը», եւ առաջին անգամ ըլլալով պահանջած էր «որոշապէս ոչ-քրիստոնեայ իմաստասիրութիւն մը»¹⁴: Վճռականորէն ըսած էր թէ Աստուծոյ դոյութեան հարցը կը պատկանի ԺԸ-ԺԷ դարերուն, եւ ոչ մէկ կերպով ԺԹ. դարուն: Մարքս կրօնքը անուանած էր ժողովուրդի ափիոն: Քրիստոսէ մէկ դար առաջ Լուկրետիոս գոված էր Եպիկուրը, որ յանդգնած էր ընդվզիլ հեթանոս աստուածներուն դէմ, ուղելով ազատել մարդկութիւնը անոնց աղգեցութենէն եւ անոնց ծնունդ նախապաշարումներէն:

11. Այո', ի'ր ստեղծած զիսկին առջեւ, որովհետեւ այն Աստուծոյ՝ որուն մահը հռչակեց Նիցշէ, չէ ճշմարտ, քրիստոնեայ Աստուծոյ, այլ Վալկներեան երաժշտութենէն ու Վալկների սխալ թելադրանքներէն ծնունդ առած Աստուծոյ մըն էր:

12. P. Prini, անդ էջ 54: Հմտ. Նիցշէ «Crepuscolo degli idoli»:

13. Georg Siegmund, **Der Kampf um Gott**, Berlin 1960. իտլ. թարգմ. Storia e diagnosi dell'ateismo, ed. Paoline 1961, էջ 388:

14. Իմաստասիրութիւն մը, այսինքն, ուր բացակայ ըլլայ Աստուծոյ: